Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «Հ և Տ Հակոբյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 200 միլիոն դրամը գերազանցող ապրանք-ների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 732-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1-ին կետում «2016 թվականի հունիսի 30-ը» բառերը փոխարինել «2017 թվա-կանի հունիսի 30-ը» բառերով.

2) որոշման հավելվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

15.	8414	Օդի կոմպրեսոր	հատ	2	-	-

».

3) որոշման հավելվածը 30-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31-րդ կետով.

«

31.	7311	Ածխաթթու գազի պահպանման տարա	հատ	1	-	-

».